



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

04 մարտի 2021 թվականի թիվ 38-Ս

ք. Երևան

«ՀԻՔԻԴ ՍՈՒՅՈՒՇՆՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2021 թվականի հունվարի 29-ին հարուցված թիվ 2 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2021 թվականի հունվարի 29-ին Հանձնաժողով մուտքագրված «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) դիմումում նշված է «ՀԻՔԻԴ ՍՈՒՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ ցանցային օպերատոր) կողմից տեսալսողական ծրագրերն առանց պայմանագրային հիմունքների վերահաղորդելու փաստի վերաբերյալ:

Ըստ Ընկերության՝ ցանցային օպերատորի կողմից առանց պայմանագիր կնքելու վերահաղորդվում է «THT-Comedy» (THT), «FRIDAY International» (Пятница Интернэшн), «THT4 International» տեսալսողական ծրագրերը, որոնց տարածման բացառիկ իրավունքը 2021 թվականի հունվարի 01-ից պատկանում է «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՉԵՔԹ» ՍՊ ընկերությանը:

Դիմումում նշված է նաև, որ Ընկերության և ցանցային օպերատորի միջև տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման լիցենզիոն պայմանագիր կնքված չէ, որը թույլ կտար ցանցային օպերատորին Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնել տեսալսողական ծրագրերի վերահաղորդումը և խնդրում է միջոցներ ձեռնարկել ցանցային օպերատորի կողմից անօրինական վերահաղորդումը դադարեցնելու ուղղությամբ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Ընկերության դիմումը՝ 2021 թվականի հունվարի 29-ին ցանցային օպերատորի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2021 թվականի փետրվարի 01-ին ծանուցել է ցանցային օպերատորին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում ցանցային օպերատորը 2021 թվականի փետրվարի 16-ին Հանձնաժողով գրավոր բացատրություն է ներկայացրել այն մասին, որ տեսալսողական ծրագրերի վերահաղորդումն իրականացրել է «Յուքոմ» ՓԲ ընկերության հետ կնքված լիցենզիոն պայմանագրի հիման վրա: Քանի որ նշված պայմանագրի ժամկետը լրացել է 2020 թվականի դեկտեմբերի 31-ին, ապա ցանցային օպերատորի կողմից առաջարկ է ուղարկվել «Յուքոմ» ՓԲ ընկերություն՝ պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ: Սակայն, ցանցային օպերատորի կողմից ուղարկված էլեկտրոնային նամակին ի պատասխան «Յուքոմ» ՓԲ ընկերությունը հայտնել է, որ համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի իրենք այլևս չեն կարող լինել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր: Ցանցային օպերատորը տեսալսողական ծրագրերի իրավատեր հանդիսացող «Международное развлекательное ТВ» ընկերությունից տեղեկացել է, որ ՀՀ տարածքում տեսալսողական ծրագրերի բացառիկ դիստրիբյուտոր է հանդիսանում «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊԵՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունը, ուստի դիմել է վերջինիս և խնդրել ուղարկել համագործակցության առաջարկ:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով, համաձայն որի Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով և հիմք ընդունելով Հանձնաժողովի նախագահի 2021 թվականի փետրվարի 17-ի թիվ 3-Ա հրամանը՝ իրականացրել է ցանցային օպերատորի մոտ մշտադիտարկում՝ տեղում դիտարկում իրականացնելու միջոցով:

Տեղում դիտարկում իրականացնելու արդյունքում 2021 թվականի փետրվարի 18-ին Հանձնաժողովի կողմից կազմվել է արձանագրություն, համաձայն որի՝ հեռարձակող կայանում ժամը 12:05-12:15-ն ընկած ժամանակահատվածում իրականացված մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից չեն վերահաղորդվում Ընկերության կողմից նշված տեսալսողական ծրագրերը:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի մասնակիցների կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի տեղում դիտարկման արդյունքներին և «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտում չի հայտնաբերվել:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ ցանցային օպերատորի և Ընկերության միջև չկա կնքված տեսալսողական ծրագրերի վերահաղորդման իրավունքի տրամադրման լիցենզիոն պայմանագիր, իսկ տեղում դիտարկման արդյունքում էլ պարզվել է, որ ցանցային օպերատորի կողմից դիմումում նշված տեսալսողական ծրագրերը չեն վերահաղորդվում, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով ցանցային օպերատորի նկատմամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթը ենթակա է կարճման:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ոչ սեփական տեսալսողական հաղորդումները կարող են հեռարձակվել միայն դրանց հեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի առկայության դեպքում:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս գործող Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը ցանցային օպերատորի լիցենզիա ստացած անձի կողմից կարող են վերահաղորդվել տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի կամ հեռարձակողի հետ պայմանագրի հիման վրա:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) վարչական տույժ նշանակելու մասին.

2) գործի վարույթը կարճելու մասին:

Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է բանավոր դիտողություն հայտարարելու, նյութերը ընկերական դատարանի, ձեռնարկությունում, հիմնարկում, կազմակերպությունում և դրանց կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծված՝ հարբեցողության դեմ պայքարի հանձնաժողովի, հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի քննությանը հանձնելու կամ դատախազին, նախաքննության կամ հետաքննության մարմնին հանձնելու դեպքում, ինչպես նաև սույն օրենսգրքի 247 հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, 49-րդ հոդվածի 1-ին մասի, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի, 282-րդ հոդվածի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 2 վարչական վարույթը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ